ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ԱՍՏՂԻԿ ԼԵՎՈՆԻ

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ և ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2024

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ
ХУРШУДЯН АСТХИК ЛЕВОНОВНА

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ КОНЦЕПЦИИ ПРАВОВОГО ГОСУДАРСТВА В КОНТЕКСТЕ ПРАВОВЫХ УЧЕНИЙ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ЕРЕВАН – 2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գառնիկ Հրաչիկի Սաֆարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հովհաննես Միքայելի Ստեփանյան**

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Հովհաննես Զավենի Սարգսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի «Հայբուսակ» համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի նոյեմբերի 13-ին ժ. 15^{00}-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051,ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2024 թվականի հոկտեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու **Ջ.Հ.Հայրապետյան**

Тема диссертации утвереждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук,профессор **Сафарян Гарник Грачикович**

Официальные оппоненты:

доктор юридических наук, профессор **Степанян Ованнес Микаелович**

кандидат юридических наук, **Саргсян Ованнес Завенович**

Ведущая организация**:** **Ереванский университет «Айбусак»**

Защита состоится 13 ноября 2024 г. 15^{00} часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции КВОН РА при Российско-Армянском университете (г. Ереван,0051, Овсепа Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 2024 г.11 октября.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук **Дж. А.Айрапетян**

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

<u>Թեմայի հետազոտման արդիականությունը.</u> Հնագույն ժամանակաշրջանից սկսած մինչև մեր օրերը մարդկային միտքը միշտ էլ փնտրտուքի մեջ է հասարակության պետաիրավական կազմակերպման լավագույն ձևի ընտրության հարցում: Այս հարցում, կարծես թե, իրավաքաղաքական մտքի խոշոր ներկայացուցիչները եկել են մեկ ընդհանուր հայտարարի՝ հասարակության հանրային-քաղաքական կազմակերպման ձևերից ամենանախընտրելին իրավական- ժողովրդավարական համակարգն է:

Արդի ժամանակաշրջանի գլոբալ մարտահրավերների պայմաններում հատուկ արժևորվում են յուրաքանչյուր ազգային պետության էությունը, նրա քաղաքականության սոցիալական ուղղվածությունը: Այս համատեքստում իրավական պետության հիմնախնդիրների ուսումնասիրությունը ձեռք է բերել թե՛ տեսական, թե՛ գործնական նշանակություն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածն ազդարարում է, որ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է»: Իհարկե, Հայաստանը, դեռևս շատ անելիքներ ունի այդպիսին դառնալու համար: Հիշյալ սահմանադրական դրույթը, ամենից առաջ, նորմ-նպատակ է, որը սկզբունքային նշանակություն ունի ազգային պետաիրավական շինարարության և դրա հետագա զարգացման համար:

Չնայած իրենց հասարակական քաղաքական զգալի նշանակության և հնչեղության, այնուամենայնիվ «իրավական պետություն» կատեգորիան հայրենական իրավագիտության մեջ բավարար ծավալով ուսումնասիրված չէ և դրա հետ կապված շատ հիմնահարցեր իրենց պատասխանին են սպասում: Սույն հետազոտությունը առաջին փորձերից մեկն է, որով հեղինակը փորձում է մասամբ լրացնել այդ բացը:

Վերոնշվածով է պայմանավորված թեմային հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական ուսումնասիրության աստիճանը. Իրավական պետության և քաղաքացիական հասարակության վերաբերյալ գոյություն ունի բավականին գիտական գրականություն:

«Իրավական պետություն» հասկացությունը բովանդակային առումով մշակվել է Կանտի փիլիսոփայական համակարգում և XIX դարի գերմանական իրավագիտության մեջ՝ հանձինս իրավաբաններ Վելկերի, Արեյինի և Մոլլի հիմնարար աշխատությունները, որոնք բոլորովին էլ չեն կորցրել իրենց տեսական և գործնական նշանակությունը նաև արդի դարաշրջանում:

«Իրավական պետության» ժամանակակից հայեցակարգի հիմունքները մշակել են Ռ.Շտամմլերի, Գ. Ռադբրուխի, Հ. Քելզենի, Հ. Հարտի, Պ.Ի. Նովոգորոդցևի, Ս.Ա.Մուրոմցևի և այլոց աշխատություններում: ԱՊՀ շրջանակներում «իրավական պետության» կատեգորիան հանգամանորեն ուսումնասիրվել են՝ Կ.Ս. Գաջիևի, Ա.Ա. Գալկինի, Մ.Կ. Գորշակովի, Ս.Ս. Ալեքսևի, Գ. Մարչենկոյի, Ե Լուկաշևայի, Լ. Մամուտի, Վ. Ներսեսյանցի, Մ. Բագլայի, Վ. Չիրկինի, Ն. Վիտրովի, Ս. Կոժևնիկովի, Վ. Սալնիկովի, Ա. Սեմիտկոլի աշխատություններում:

Հայրենական իրավագիտության մեջ «իրավական պետություն» կատեգորիայի հետ կապված որոշակի հարցեր ուսումնասիրվել են Ն.Ա. Ապիյանի, Հ.Մ. Ստեփանյանի, Գ.Հ.Սաֆարյանի, Գ.Գ. Հարությունյանի, Ա.Գ. Վաղարշյանի, Մ.Հ. Մուրադյանի, Ա. Հ. Պետրոսյանի և այլոց կողմից:

Իրավական պետության մասին տեսական պատկերացումների ձևավորման և կիրառման առումով զգալի ներդրում են ունեցել հունահռոմեական իրավական հայեցակարգերը, նրանց պետաիրավական կառուցակարգը և կառավարման ձևը (ժողովրդավարության, հանրապետական կարգեր), ինչպես

նաև «իրավական օրենքի» հայեցակարգը, «յուրաքանչյուր պոզիտիվ իրավունքում պետք է ընկած լինի իրավունքը և արդարությունը»: Անտիկ դարաշրջանի հունահռոմեական իրավական հայեցակարգը աղբյուրագիտական հենք հանդիսացավ նոր և նորագույն ժամանակաշրջանների՝ «իրավական պետություն», «իրավունքով կառավարելու», «սոցիալ-իրավական պետություն» և «իրավունքի գերակայություն» հայեցակարգային տեսությունների և պետակաշինության պրակտիկայի համար: Այս ամենը վկայում է նշված հիմնախնդրի համալիր հետազոտման անհրաժեշտությունը, որով փորձ է արվել լրացնել առկա բացը:

Հետազոտության օբյեկտն է իրավական պետականության վերաբերյալ հայեցակարգերի քննական վերլուծությունը:

Հետազոտության առարկան է սոցիալ-իրավական պետության կայացման հիմնախնդիրները ՀՀ-ում արդի պետաիրավական զարգացումների համատեքստում:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները.</u> Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել «սոցիալ-իրավական պետության» էությունը, առանձնահատկությունները և մեր Հանրապետությունում դրա կայացման հետ կապված հիմնահարցերին համարժեք լուծումներ առաջադրելը:

Հիմնական նպատակին հետամուտ փորձ է արվում լուծել հետևյալ խնդիրները.

- բացահայտել իրավական պետության հայեցակարգի պատմական զարգացման օրինաչափությունները, դրանց էությունն ու առանձնահատկությունները,
- լուսաբանել «իրավական պետություն» համակարգված հայեցակարգը իրավաքաղաքական ուսմունքների համատեքստում,

- բացահայտել «ժողովրդաիշխանություն», «պետական իշխանություն», «իրավական պետություն» եզրույթների բովանդակային առանձնահատկությունները,
- առանձնացել և հիմնավորել սոցիալ-իրավական պետության կայացման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության մեթոդաբանության հիմունքները. Սույն ատենախոսական հետազոտության մեթոդների ընտրությունը պայմանավորված է օբյեկտի ու առարկայի առանձնահատկությամբ: Այս առումով հետազոտության ընթացքում օգտագործվել են համագիտական, մասնավոր գիտական ու հատուկ մեթոդները, այդ թվում՝ դիալեկտիկայի օրենքները, պատմական, պատմահիրավական, համակարգային, համեմատական-իրավական, տրամաբանական-իրավաբանական վերլուծության մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքն են կազմել իրավունքի ու պետության տեսության և պատմության, ժամանակակից իրավունքի ճյուղային գիտությունների վերաբերյալ աշխատությունները, մասնավորապես՝ Ն.Ա. Ապիյանի, Ա.Կ.Եսայանի, Հ. Մ. Ստեփանյանի, Գ.Հ. Սաֆարյանի, Ա.Գ.Վաղարշյանի, Մ.Հ. Մուրադյանի, Ս.Ս. Ալեքսեևի, Յու.Գ. Ալեքսեևի, Գ.Մ.Բարացի, Ռ.Ս.Բևզենկոյի, Վ.Ա.Բելովի, Գ.Ջ.Բերմանի, Պ.Գ.Վինոգրադովի, Վ.Գ.Գրաֆսկու, Դ.Դ.Գրիմի, Դ.Վ.Դոժդևի, Ն.Ա.Դրովեռնուայի, Վ.Վ.Եֆիմովի, Բ.Ս.Երասովի, Ն.Պ. Զագոսկինի, Ի.Ա. Իսայևի, Վ.Պ. Կամիշանսկու, Լ.Ա. Կասոյի, Գ.Ի. Կաբակովայի, Ա.Ի. Կոսարյովի, Վ.Ա.Լետյայևի, Ի.Մ.Լուրյեի, Ի.Պ. Մեդվեդևի, Վ.Ս. Ներսեսյանցի, Ե.Վ. Սալոգուբովայի, Ն.Ս. Սուվորովի, Գ.Ֆ. Շերշենևիչի, Ռ.Լ. Խաչատուրովի, Ի.Յա. Ֆրոյանովի, Ի.Ե. Էնգելմանի և այլոց գիտական հետազոտությունները:

Հետազոտության մեջ օգտագործվել են նաև գերմանացի գիտնականների աշխատությունները, ինչպիսիք են՝ Գ.Կաուֆմանը, Ռ. ֆոն Հերինգը, Ֆ.Կ. Սավինին, Հ. Քյոտցը, Գ.Ֆ. Պուխտան, Կ.ֆոն Չիլարկը և ուրիշներ:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը: Գիտական նորույթը, ամենից առաջ, արտահայտվում է իրավական պետության նորովի մեկնաբանման, այսինքն՝ իրավական պետությունը ոչ միայն զուտ պետական կառուցակարգի իրավական ձև է, այլև «կենդանի իրավական օրգանիզմ», որին բնորոշ է հասարակության պահանջներին անմիջական արագ և որակյալ արձագանքումը, իրավունքի սահմաններում հանրային և անհատական շահերի ողջամիտ զուգակցումը և լուծումը, հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի բանական պահանջմունքների բավարարման համար համապատասխան սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծումը, ֆիզիկական և իրավաբանական անձանց նախաձեռնությունների խրախուսումը, աջակցումը, հանրային իշխանության մարմինների պարբերաբար հաշվետվողականության և իրենց սոցիալական պատասխանատվության ապահովումը: Աշխատանքում հիմնավորվում է նաև այն հայեցակարգային մոտեցումը, ըստ որի պետականության զարգացման արդի փուլում «իրավական պետությունը» տրանսֆորմացիայի է ենթարկվում «սոցիալ-իրավական» պետության, որի հիմնական առանձնահատկություններից է ոչ միայն «իրավունքով կառավարելը», այլ նաև իրավունքի միջոցով ստեղծել «սոցիալական արդարության» սկզբունքի կենսագործման ապահովումը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում: Սոցիալ-իրավական պետության բոլոր գործառնական լիազորությունները ոչ միայն սահմանափակվում են իրավունքով, այլ դրանք ուղղված պետք է լինեն մեկ հիմնական նպատակի իրականացմանը՝ անհատի իրավունքների երաշխավորված պաշպանությանը, բարեկեցիկ և անվտանգ կյանքի ապահովմանը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Իրավական պետության տեսությունն ու պրակտիկան ունեն երկարատև և խիստ ուսանելի պատմություն: Հանրային-քաղաքական իշխանության կազմակերպման լավագույն ձևերի մասին մարդկային բանականությունը խորհել է դեռևս վաղ

պետականությունների (շումերական, հայկական, խեթական, եգիպտական, չինական, հնդկական) ժամանակաշրջանում (մ.թ.ա. III-II հազարամյակներում): Մասնավորապես, Հայոց Արատտա պետությունը (մ.թ.ա. III հազարամյակի վերջերին) օտար աղբյուրների վկայությամբ անվանվում էր «Սրբազան ծեսերի և օրենքների երկիր»: Այս կապակցությամբ հեղինակը հիմնավորում է այն հայեցակարգային մոտեցումը, որ հայ ժողովրդին՝ իր սկզբնավորման շրջանից մինչև ներկա օրերը, բնորոշ է իրավունքով, իրավունքի շրջանակներում ապրելու գիտակցությունը և դա մեր ժողովրդի ազգային ինքնության կարևոր բաղադրիչներից է:

2. Ներկայիս իրավապետականության գաղափարախոսությունը վերածվել է «սոցիալ-իրավական» պետության հայեցակարգի ու պրակտիկայի, որը ենթադրում է ոչ միայն «իրավունքով կառավարելու», «իշխանությունն իրավունքով սահմանափակելու» ժամանակակից կարգախոսությունը, այլև «մարդավայել և բարեկեցիկ» ապրելու սոցիալական կանխադրույթը: Այս առիթով աշխատանքում հիմնավորվում է այն եզրույթը, որ մարդկային բանականության իրավական միտքը ձգտում է դեպի կատարելիության հասցնել հանրային կյանքի պետահիրավական կազմակերպման տեսանելի իդեալին՝ «սոցիալ-իրավական պետականության» կառուցվածքին:

3. Իրավական պետությունում ժողովուրդը որպես իշխանության աղբյուր, իր իշխանությունն իրականացնում է ներկայացուցչական մարմինների միջոցով, որոնց հանձնարարում է իրենց լիազորությունների իրականացումը որոշակի ժամկետում և իրենց գործունեության հաշվետվողականության եղանակով: Մնացած պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք ածանցված են ներկայացուցչական մարմիններից և կազմավորվում են նրանց միջոցով՝ Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված կարգով: Միաժամանակ, դա բոլորովին չի նշանակում, որ

պետական ողջ կառուցակարգը (մեխանիզմը) ուղղակի կախվածության մեջ է ներկայացուցչական մարմիններից:

4. Մեր կարծիքով, իրավական պետությունում իշխանության որոշակի հատուկ գործառույթների և խնդիրների առկայությունը պահանջում են ներկայացուցչական կամ առաջնային մանդատով օժտված մարմինների կողմից կազմավորված առանձին պետական մարմինների գործառնական ու կառուցակարգային որոշակի անկախություն և ինքնավարություն՝ Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնելու համար: Այդ անկախությունը և ինքնավարությունը երաշխավորվում է ոչ թե ժողովրդի ուղղակի կամքի արտահայտման իրավազորությամբ, այլ «իրավունքով կառավարելու» կանխադրույթով:

5. Այս կապակցությամբ, հեղինակը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը կարիք ունի հստակեցման, քանի որ այն լիարժեք չի արտահայտում ժողովրդավարության և իրավական պետության բովանդակությունն ու էությունը: Այդպիսի մոտեցմամբ ընդհուպ նույնացվում են «ժողովրդաիշխանություն» և «պետական իշխանություն» կատեգորիաները: ՀՀ նոր Սահմանադրության նախագծում հարկ է հստակ սահմանազատել «ժողովրդի իշխանություն», «ժողովրդավարություն», «իրավական պետություն» հասկացությունները: Հիմնական շեշտադրումը պետք է լինի «իշխանությունը իրավունքով սահմանափակելու» և «իրավունքով կառավարելու հիմնադրույթների» վրա, որոնք «սոցիալ-իրավական պետության» կարևորագույն իրավաքաղաքական բաղադրիչներն են:

6. Իրավունքով կառավարելու, հետևաբար իրավունքի գերակայության և իրավական պետության գնահատման կարևոր չափանիշներից մեկը՝ «ստվերային կառավարման աստիճանի որոշելն է»: Խնդիրը նրանում է, թե իրական իշխանությունն որքանով է գտնվում սահմանադրական ինստիտուտների

(մարմինների) ձեռքում և որքանով է դա կրում երևակայական, պատրանքային բնույթ, իսկ իրական իշխանությունը հայտնվել է կամ կարող է հայտնվել ստվերային «կառույցների» և «որոշակի անձանց» ձեռքում: Այս իրողության ծավալումը կարող է ուղիղ համեմատական կապի մեջ գտնվել դատական իշխանության իրական անկախության ու գործունակության աստիճանի հետ, և որի երաշխավորմամբ է միայն հնարավոր կանխել իշխանության յուրացումը մեկ մարմնի կամ մեկ անձի դեպքում: Հետևաբար, սոցիալ-իրավական պետությունն իր գործառնությամբ և առաքելությամբ պետք է ղեկավարվի իրավունքի գերակայությամբ և սոցիալական արդարության սկզբունքներով:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը. Աշխատանքի գիտատեսական նշանակությունը նրանում է, որ նրա արդյունքները կարող են օգտագործվել գիտամանկավարժական աշխատանքում, ինչպես նաև խորացնել պատկերացումները «սոցիալ-իրավական պետության» վերաբերյալ:

Գործնական առումով, հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել օրենսդիրների, պետական ապարատի աշխատակիցների և, ընդհանրապես՝ հայոց պետական շինարարությամբ հետաքրքրվողների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ իրականացվել է ատենախոսության քննարկումը և գրախոսությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտահայտվել են հեղինակի գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, երկու գլխից, հինգ ենթագլուխներից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության **ներածության մեջ** հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Իրավական պետության հայեցակարգի պատմական զարգացման հիմնական ուղենիշները»** վերտառությամբ, կազմված է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Պետական իշխանության իրավական կազմակերպման գաղափարների ձևավորումը և զարգացումը հին և միջին դարերում»** վերնագրով, հեղինակը սկզբնաղբյուրների հիման վրա համակողմանի վերլուծության է ենթարկել հին և միջին դարերում պետական իշխանության իրավական կազմակերպման հայեցակարգային մոտեցումների բովանդակային առանձնահատկությունները: Այդ հայեցակարգային մոտեցումներն իրենց արտացոլումն են ստացել կրոնաառասպելական գրվածքներում: Հնագույն քաղաքակրթությունների շումերաբաբելոնական, հայկական, խեթական, եգիպտական, չինական, հնդկական մեզ հասած վկայություններում արծածավել են պետական իշխանության կազմակերպման իրենց մտահղացումները, պատկերացումները, պետական իշխանությունը իրավունքով իրականացնելու (Մխիթար Գոշ, Թովմա Աքվինացի) գաղափարներով:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավական պետության հայեցակարգի զարգացումը նոր դարաշրջանի իրավաքաղաքական ուսմունքներում»** վերնագրով, հեղինակը բացահայտում է Լուսավորության ժամանակաշրջանի նշանավոր մտածողների՝ Հուգո Գրոցիոսի, Ջոն Լոկի, Ի.

Կանտի և այլոց հայեցակարգերը «իրավական պետության»ուսմունքի վերաբերյալ, որոնք հետագայում իրենց գործնական արտահայտությունը գտան ԱՄՆ-ի Սահմանադրությունում, Ֆրանսիայի Սահմանադրությունում, կոդիֆիկացված օրենսդրական ակտերում, Մարդու իրավունքների հռչակագրերում և այլն:

Այդ ժամանակաշրջանի իրավական պետության հայեցակարգային հիմնական մոտեցումների բովանդակությունը կայանում է հետևյալում. պետությունը հասարակությունը կազմակերպում է իրավունքի գերակայության պայմաններում և, ամենակարևորը՝ պետության իրավական կազմակերպումը և պետական գործունեության կարգավորումը պետք է հիմնված լինի նաև բանականության սկզբունքների հիման վրա:

Աշխատանքի առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **«Սոցիալ-իրավական պետականության գաղափարի ձևավորումը և զարգացումը նորագույն ժամանակաշրջանում»** վերնագրով, բացահայտվում է նորագույն ժամանակաշրջանում ձևավորված «սոցիալ-իրավական» պետության էությունը, նրա տեսական և գործնական նշանակությունը: Աշխատանքում հեղինակը հիմնավորում է այն տեսակետը, ըստ որի՝ «սոցիալ-իրավական» պետությունը իրավական և սոցիալական հայեցակարգերի մեխանիկական միացում չէ, այդ դրանց օրգանական և անքակտելի կապի մեջ է՝ իրենց հակասություններով և համաձայնություններով հանդերձ: Պրակտիկայում սոցիալ-իրավական պետության կայացումը շատ բարդ ու բազմաշերտ գործընթաց է, որում իրավունքի գերակայությունը և շուկայական հարաբերությունները մեկտեղվում են «սոցիալական արդարության» համակարգում, «մարդակենտրոն» հասարակությունում:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Սոցիալ-իրավական պետության կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Սոցիալ-իրավական պետության կայացման նախադրյալները»** վերնագրով, վեր են հանվում այն նախադրյալները, որոնց առկայության պայմաններով հնարավորություն է ընձեռվում սոցիալ-իրավական պետության կայացումը: Այդպիսի նախադրյալներ աշխատանքում նշվում է՝ իրավունքի գերակայությունը, իշխանությունը իրավունքով սահմանափակելը, սոցիալական արդարությունը, մարդակենտրոն հասարակությունը և իրավական համակարգը, խելամիտ փոխզիջումների հասարակությունը և այլն:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Սոցիալ-իրավական պետության հեռանկարները սահմանադրության և սահմանադրականության զարգացումների համատեքստում»** վերնագրով, հանգամանորեն վերլուծության են ենթարկվում գործող Սահմանադրության փոփոխությունների կամ նոր Սահմանադրության ընդունման հիմնավորումները, ինչպես նաև իրավական նորմերի սահմանադրականացման, այսինքն՝ ոչ միայն դրանց բովանդակային համապատասխանեցումը սահմանադրական դրույթներին, այլև դրանց անխափան գործադրումը հասարակական կյանքում: Իրավունքով ապրելը պետք է դառնա հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի կենսակերպ, նպատակ և գործունեության ուղեծիր:

Ատենախոսության **ամփոփումում** ներկայացվել են հետևյալ հիմնական եզրակացությունները.

1. Սոցիալ-իրավական պետությունը իրավունքի (իրավական օրենքի) և իրավաօրինականության գերակայության հիման վրա ձևավորված հանրային-քաղաքական իշխանության կազմակերպման իրավական ձև է, որը ներառում է նորմատիվ իրավական, ինստիտուցիոնալ, գաղափարական և մարդասիրական ասպեկտները: Սոցիալ-իրավական պետությունը նաև մարդասեր, խաղաղասեր և բարոյական պետություն է:

2. Սոցիալ-իրավական պետության ֆորմալ-իրավական հատկանիշներն են՝ մարդու բնական և անօտարելի իրավունքների պաշտոնապես ճանաչումը և դրանց երաշխավորված պաշտպանությունը. իրավական օրենքի գերակայությունը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում, իշխանությունների բաժանումը և տեղական ինքնակառավարման համակարգի ինքնուրույնությունը և ինքնավարության ապահովումը, անկախ դատական համակարգի առկայությունը: Բովանդակային առումով նշված հատկանիշները համապատասխանում են սոցիալ-իրավական պետության առնվազն երեք փոխկապված բաղադրիչներին՝ մարդասիրական (հումանիտար)-իրավական (մարդու և քաղաքացու իրավունքներ և ազատություններ), նորմատիվ-իրավական (գործող օրենսդրության և ինստիտուտների իրավական բնույթը) և սահմանադրաիրավական (իշխանությունների բաժանման և հավասարակշռման համակարգը՝ ներառյալ՝ զսպումների և հակակշիռների մեխանիզմը):

3. Սոցիալ-իրավական պետությունը ենթադրում է ոչ միայն օրենքի և օրինականության գերակայություն, որն, ինքնին, դրական և ընդունելի է, այլև իրավական օրենքի և իրավաօրինականության ապահովում, այսինքն՝ օրենքը և օրինականությունը իրենց էությամբ և բովանդակությամբ պետք է նույնպես իրավական լինեն, համապատասխանեն իրավունքի հիմնական արժեհամակարգին՝ ազատության, արդարության և հավասարության հատկանիշներին՝ իրավականության և իրականի տեսանկյունից: Ազատությունը՝ որպես իրավունքի չափ, արդարությունը՝ որպես համընդհանուր և համարժեք իրավաչափություն՝ միայն ֆորմալ-իրավական բովանդակությամբ, այսինքն՝ իրավական օրենքով պայմանավորված հնարավորությունների ազատ դրսևորման հավասարություն, որին խորթ է ցանկացած արտոնություններ և առավելություններ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ազատությունը, արդարությունը և

հավասարությունը իրական կյանքում հնարավոր է բացառապես իրավունքի սահմաններում և իրավունքով պայմանավորված:

4. Սոցիալ-իրավական պետությունը ենթադրում է նաև, որ պետական իշխանության մարմինների համակարգում տարանջատվում է իշխանության երեք հավասարազոր ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական: Այստեղ «հավասարազոր» տերմինը ենթադրում է ոչ թե դրանց օժտվածությունը միևնույն լիազորություններով ու կարգավիճակով, այլ սահմանադրորեն սահմանված իրավասության շրջանակներում: Իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը լինելով անհրաժեշտ պայման իրավական պետության համար, այդուհանդերձ դա բավարար չէ, պետական իշխանության իրավականության տեսակետից: Այս առումով, գտնում ենք, որ իշխանության երեք ճյուղերն էլ՝ իրենց կազմավորման և գործունեության տեսակետից պետք է բավարարեն լեգիտիմության (իրավական և սոցիալական) պահանջները և իրենց կառույցներում նույնպես պահպանեն հարաբերական ինքնավարությունը և անկախությունը:

5. Իրավական ուսմունքների պատմության հոլովույթում իրավական պետության վերաբերյալ մոտեցումները կարելի է պայմանականորեն դասակարգել հետևյալ խմբերի՝ որպես չափանիշ ընդունելով տվյալ մոտեցման կամ ուսմունքի տեսական մեթոդաբանական հիմունքները.

<u>առաջին,</u> աստվածաբանական-իրավական հայեցակարգ պետության օրինականության մասին,

<u>երկրորդ</u>, բնական իրավունքի տեսությունը՝ իրավապետականության մասին,

<u>երրորդ,</u> պոզիտիվիստական (լեգիստական) հայեցակարգը՝ իրավական պետության վերաբերյալ,

<u>չորրորդ</u>, ազատական-իրավաբանական հայեցակարգը՝ իրավական պետության և իրավական օրենքի մասին:

6. Ժամանակակից սոցիալ-իրավական պետությունը իրավական և սոցիալական պետության (տեսական և գործնական առումով) երկարատև էվոլուցիոն զրագացման արդյունք է, որում սոցիալական հակասությունները հասցվում են նվազագույնի, ինչպես նաև պետության երաշխավորված պաշտպանվածության ներքո են ոչ միայն քաղաքացիական և քաղաքական իրավունքներն ու ազատությունները, այլև սոցիալական, տնտեսական և մշակույթային իրավունքները և վերջիններս իրականացման համար երաշխավորված կառուցակարգի առկայությունը:

7. Սոցիալ-իրավական պետությունը ներկայացնում է «հակադրությունների, փոխզիջումների և խելամիտ շահերի միասնական» ամբողջական համակարգ, տարամիտված զարգացումների և միտումների փոխգործունեության ու փոխզիջման արդյունք, որի հիմնական նպատակն է հասարակական համերաշխության և բնականոն գործառնության ապահովումը:

8. Սոցիալ-իրավական պետության երկվությունը հենց նրա շարժիչ ուժն է, մի կողմից ազատ շուկայական հարաբերությունների տնտեսությունը (սոցիալական), մյուս կողմից՝ այդ հարաբերությունների իրավական կարգավորումը՝ իրավունքի գերակայության եղանակով: Այստեղ սոցիալականն ու իրավականը հանդես են գալիս ոչ միայն անտագոնիստական երևույթներ, այլ միմյանց լրացնող, փոխներթափանցող գործոններ, որոնք որոշակի կայունություն են ապահովում հասարակության մեջ և ապահովում են վերջինիս բնականոն զարգացումը: Այս առումով, կարելի է պնդել, որ սոցիալ-իրավական պետությունը «կենդանի օրգանիզմ» է, որը միահյուսվում է հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի կենսագործության և նրանց օրինական ու ողջամիտ շահերի հետ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Խուրշուդյան Աստղիկ.** Իրավական պետության կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Երևան, Ստեփանյան Պրինտ, 2024, 108 էջ (մենագրություն):

2. **Խուրշուդյան Աստղիկ**. Իրավական պետության հասկացությունը և հիմնական հատկանիշները// «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտա-գործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 49, Երևան, 2008, էջ 56-62:

3. **Խուրշուդյան Աստղիկ.** Պետական իշխանության իրավական կազմակերպման գաղափարների ձևավորումը և զարգացումը հին աշխարհի քաղաքակրթություններում// «Օրինականություն» դատախազության գիտա-գործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 50, Երևան, 2008, էջ 54-57:

4. **Խուրշուդյան Աստղիկ.** Իրավապետականության գաղափարների զարգացումը անտիկ դարաշրջանում// «Օրինականություն» դատախազության գիտա-գործնական և ուսումնամեթոդական հանդես, թիվ 51, Երևան, 2009, էջ 49-53:

5. **Խուրշուդյան Աստղիկ.** Իրավական պետության հայեցակարգի ժամանակակից դրսևորումները// «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 4, Երևան, 2017, էջ 185-193:

6. **Խուրշուդյան Աստղիկ**. Իրավական պետության հայեցակարգի մշակումը գերմանական իրավագիտության մեջ (XIX դ.)// «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 4, Երևան, 2018, էջ 174-178:

7. **Խուրշուդյան Աստղիկ.** Իրավական պետության հայեցակարգի հիմնավորումը գերմանական դասական փիլիսոփայության համակարգում// Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, թիվ 2, Երևան, 2022, էջ 86-97:

8. **Խուրշուդյան Աստղիկ.** Իրավական պետության կայացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում// Լրաբեր հասարակական գիտությունների հանդես, թիվ 2, Երևան, 2022, էջ 142-146:

Резюме

Хуршудян Астхик Левоновна

«Формирование и развитие концепции правового государства в контексте правовых учений »

Актуальность исследования темы обусловлена необходимостью создания в нашей стране правового государства и правового общества, где гарантирована защита прав и свобод человека.

Основная цель исследования-раскрыть природу «социально-правового государства», его содержательные особенности и предложить адекватные решения вопросов, связанных с его становлением в нашей республике. В этом смысле в работе предпринята попытка выявить закономерности исторического развития понятия правового государства, ее сущность и характеристики, а также, обосновать предпосылки становления социально-правового государства в Республике Армения. Научная новизна данного исследования выражается в новой правовой трактовке, т.е. правовое государство-это не только форма государственного устройства, но и «живой правовой организм», для которого характерно быстрое и качественное реагирование на запросы общества, разумное сочетание общественных и индивидуальных интересов в пределах закона, создание соответствующих социально-экономических условий для удовлетворения рациональных потребностей общества и каждого его члена; поощрение и поддержка инициатив физических и юридических лиц, обеспечение регулярной подотчетности органов государственной власти и их социальная ответственность. В работе также обосновывается концептуальный подход о том, что в условиях развития современной государственности «правовое государство» трансформируется в «социально-правовое государство, одной из основных особенностей которого является не только «правовое управление», но и «правовое управление», но и создание посредсвом права и пеализация принципа «социальной справедливости» во всех сферах в общественных отношений.Все оперативные полномочия социально-правового государства не только ограничены законом, но и должны быть направлены на реализацию одной из главной цели: защита прав личности и обеспечение благополучной и безопасной жизни. Современная идеология правового государства превратилась в концепцию и практику «социально-правового» государства, предполагающую не только лозунг «власти по

праву», «ограничения власти по праву», но и социальные предпосылки, «гуманной и процветающей жизни». По этому поводу в работе обосновывается тезис о том, что правовая мысль человеческого разума стремится к зримому идеалу государственно-правовой организации общественной жизни, устройству социально-правовой государственности.

Теоретическая и практическая значимость работы заключается в том, что результаты исследования могут быть использованы в учебной и научной работе, при составлении учебных программ, специальных курсов по теории права.

Summary

Khurshudyan Astghik Levon

Formation of the concept and development of the legal state in the form of legal teachings

The topicality of the topic research is due to the need to establish a legal state and a legal society in our country, where human rights and freedoms are guaranteed to be protected.

The main goal of the research is to reveal the nature of the "social-legal state", its substantive features and to propose adequate solutions to the issues related to its establishment in our Republic. In this sense, an attempt was made in the work to identify the patterns of the historical development of the concept of the legal state, their essence and characteristics, as well as to substantiate the prerequisites for the establishment of the socio-legal state in the Republic of Armenia.

The scientific novelty of this research is expressed by a new legal interpretation, i.e. the legal state is not only a form of state structure, but also a "living legal organism", which is characterized by a quick and qualitative response to the demands of society, a reasonable combination of public and individual interests within the limits of the law, and solution, creating appropriate socio-economic conditions for satisfying the rational needs of society and each of its members, encouraging and supporting the initiatives of physical and legal entities, ensuring regular accountability of public authorities and their social responsibility.

The work also substantiates the conceptual approach, in the context of the development of modern statehood, the "legal state" is transformed into a "social-legal" state, one of the main features of which is not only "governing by law", but also creating the principle of "social justice" in public relations through law. in all fields. All operational powers of the social-legal state are not only limited by law, but they must be aimed at the realization of one main goal: the protection of individual rights and the provision of a prosperous and safe life. The current ideology of the rule of law has turned into the concept and practice of a "social-legal" state, which implies not only the slogan of "rule by right", "limiting power by the right", but also the social assumption of "humane and prosperous" living. On this occasion, the thesis is substantiated in the work that the legal thought of human reason strives towards the visible ideal of state-legal organization of public life, the structure of "social-legal statehood".

The theoretical and practical importance of the work is that the research results can be used in scientific and pedagogical work, as well as to deepen our understanding of the "social-legal state".

From a practical point of view, the results of the research can be useful for legislators, employees of the state apparatus and in general, those interested in Armenian state building.